

Ք Ս Ա Ն Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.  
Կամ Tiflis, Redaction „Mschak“.  
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Թմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցիւտով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաւրման ընդհանուր 2 կոպեկ.  
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Հ ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ր Ա Ր Թ Ր Ո Ւ Ն Ի

Կ ո Ն ո տ ա Ն զ ի Ն ք ա հ ա Ն ա յ Տ է ր-Ս տ ե փ ա Ն և ա Ն ց, յայտնելով իր ան-  
մուսնային ամուսնու.

## ԵԿԱՏԵՐԻՆԷ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

մահը, որը տեղի ունեցաւ ամսիս 17-ին, Յիսիմակ գիւղում, խնդրում է ազգականներին  
և ծանօթներին չնորհ բերել հանգուցեալի թաղման հանդէսին, որ տեղի կունենայ կիրա-  
կի օր, ամսիս 25-ին, Գորի քաղաքում:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ է հոգատարութիւն.—Ներքին  
ՏԵՐՈՒԹԻՒՆ. Մեր գիւղատնտեսներին. Նամակ  
Դիւթանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵ-  
ՐՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից.—Արտաքին  
լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սև հացերը:

### ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Պարտաւոր ենք արձանագրել այն տխուր  
իրողութիւնը, որ Անդրկովկասի շատ տե-  
ղերում և զինաւորապէս Երևանեան նա-  
հանգում հացի բերքը երաշտի պատ-  
ճառով սաստիկ վնասվեց: Ամառվայ  
սկզբին ցանքերի դրոշմները շատ բաւա-  
րար էր և նրանք կարօտ էին միայն մի  
երկու անձրեւի, որպէս զի տան առատ  
հունձ: Այժմ անկերարաւանայի կերպով  
մնացել են անձրեւի տեղերում ցանած  
հացահատիկները: Սուրմայուրի գաւառի  
լեռնային մասը զրկվել է թէ հացից,  
թէ խոտից և թէ նոյն իսկ փոքր ի շատ  
բուստարք քանակութեամբ դարմանից:  
Ալեքսանդրօպոլի և Նոր-Բայազետի գա-  
ւառները, որոնք իրանց հացով կերակրում  
են շրջակայ տեղերը, իրանք կարօտութեան  
մէջ պէտք է լինեն: Լաւ չէ և Գանձակի  
նահանգի բերքը, բայց նա բոլորովին չէ  
փչացել և ընդհանրապէս միջակ տեղն է  
բռնում: Նախորդ տարիների հետ համե-  
մատած: Լեռնային բարձր տեղերում, ուր  
ցանքերը դեռ դարար են, անձրեւները  
կարող են փոքր ինչ օգնել գործին, բայց  
արդէն մնացած և կարօտութեան են-  
թարկված տեղերը այնքան ընդարձակ են,  
որ պարտաւորեցուցից կերպով հրապարակ  
է քայլիս ազգաբնակչութեան օգնելու հարցը:  
Մեր գիւղական հասարակութիւնները  
նախ և առաջ պէտք է կազմեն իրանց հա-  
սած մնացորդի ձի շ զ ար ձ ա ն ա գ ր ու-  
թ իւ Ն և պաշտօնապէս հաղորդեն իշխա-

նութեան: Այդպիսի արձանագրութիւն  
կազմելը կարեւոր է ոչ միայն այն դիտու-  
մով, որ իշխանութիւնը ինքը սկսի ձեռ-  
նարկել օգնութեան միջոցներին, այլ և այն  
նպատակով, որ մասնաւոր բարեգործու-  
թիւն անել ցանկացողները կարողանան  
հիմնվել պաշտօնական տեղեկութիւնների  
վրա և կազմակերպել նպատակ դրածը ա-  
ւելի ապահով կերպով: Երբ ձի շ զ տեղե-  
կութիւնները չը կան, և նրանք չեն հաս-  
տատված մերձաւոր իշխանութեան կող-  
մից, այն ժամանակ չարամիտ մարդկանց  
առաջ բացվում է բամբասանքի և զրը-  
պարտութիւնների համար ընդարձակ ա-  
պարէզ և մարդասիրութեան գործը մնա-  
վում է:

Անշուշտ գիւղական հասարակութիւննե-  
րը չը պէտք է իրանց ամբողջ յոյսը դնեն  
արտաքին նպաստների վրա, այլ աշխատեն  
իրանց միջոցներով մեղմացնել ձախորդու-  
թեան ազդեցութիւնը: Գիւղացիների մէջ  
չէ պատրաստված և ընդհանրապէս միա-  
սին գործելու սկզբունքը: Իւրաքանչիւր  
անձ մտածում է իր մասին և վախենում  
է հարեանների հետ միասին գործի ձեռ-  
նարկելուց: Այդպիսով մնացած են շա-  
տերը: Մինչդեռ դժուար է չէր լինի գիւղա-  
կան հասարակութեան համար ստուգել  
թէ ո՞ւմ ի՞նչ քանակութեամբ հաց է  
հարկաւոր և յետոյ մի անգամից ձեռք  
բերել այդ հացը աւելի ձեռնառու պայման-  
ներով: Միացած ոյժով շատ հեշտ է հաց  
բերել տալ նոյն իսկ շատ հեռու տեղերից,  
մինչդեռ առանձին անհատների համար  
դա դժուար է և նստում է շատ թանկ:  
Անկապած, ամենամեծ հոգսերից մէկն էլ  
այն պէտք է լինի, որ երկրագործը իր  
ձեռքին ունենայ բաւականաչափ սերմա-  
ցուցներ, որպէս զի արտերը չը մնան չը  
ցանած և ձախորդութիւնը չը շարունակ-  
վի և յետագայ տարիներում: Անհրաժեշտ  
է հոգատարութիւն:

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

## ՍԵՒ ՀԱՏԵՐԸ

(Անատոլի Թրանսի)

Հռչակաւոր Ֆորէնցիայում ապրում էր Նի-  
կոլա Նէրլի բանկիրը: Առաւօտեան ժամի զան-  
գերը խփելիս նա արդէն նստած էր լինում իր  
սեղանի առաջ. երբ խփում էին իրիկնապահի  
զանգերը, նա նստած էր լինում միևնոյն տեղը  
և ամբողջ օրը զանազան գումարներ էր գրի-  
անցում իր հաշուապահական մատեանների մէջ:  
Նիկոլա Նէրլին փող էր փոխ տալիս կայսրին  
և պապին: Եւ եթէ պարտք չէր տալիս սատա-  
նային, այդ նրանից էր, որ վախենում էր կորը-  
նել փողերը՝ գործ ունենալով այդ օգուհետ, որ  
զուր չէ կոչվում չար ոգի և որ այնքան հարա-  
գէտ է ամեն տեսակ սատանութիւնների մէջ:  
Նէրլին վճարական մարդ էր և կասկածոտ: Նա  
մեծ հարստութիւն էր դիզել և շատ մարդկանց

էր գոփել: Այդ էր պատճառը, որ այնքան յարգ-  
ված էր Ֆորէնցիայում:

Նրա տունը պալատ էր. արեւի լոյսը թափան-  
ցում էր այնտեղ միայն նեղ պատուհանների  
միջով, և շատ խոնհե բան էր այդ ամրոցի պէս  
պիտի լինի հարուստի բնակարանը. մեծ կարո-  
ղութիւն ունեցողները խելացի են վարվում՝ ոչ-  
ժով պաշտպանելով այն, ինչ որ դիզել են խո-  
րամանկութեամբ: Այդ նպատակով էին շինված  
Նէրլիի պալատում վանդակներ և շղթաներ:  
Պալատի պատերը զարդարված էին հմուտ վար-  
պետների որմանկարներով. այդտեղ պատկերաց-  
րած էին առաքինութիւններ կանանց կերպա-  
րանքով, նահապետները, մարգարէները և Իս-  
րայէլացոց թագաւորները: Սենեակների գորգե-  
րը պատկերացնում էին Ալեքսանդրի և Տրիստա-  
նի անկեղծոյնները, ինչպէս նաեւ պատմված  
են վէպերում:

Բարեգործական հիմնարկութիւններով Նէրլին  
մինչ հեռուոր երկիրներ տարածեց իր հարստու-  
թեան հռչակը: Քաղաքային պարիսպներից դուրս  
նա հիմնեց մի հիւանդանոց, որի պատերի վրա  
ներկերով և քանդակներով պատկերացրած էին  
նրա կեանքի ամենափառաւոր գործերը: Մա-  
րիամ Աստուածածնի նոր տաճարի աւարտման

## ՆԵՐՔԻՆ ՏԵՐՈՒԹԻՒՆ

### ՄԵՐ ԳԻՒՂԱՏՆՏԵՆՆԵՐԻՆ

Յայտնի է թէ այս տարի ինչ սոսկալի հա-  
րուածներ հայրենց մեզ կարկուտը «Մշակը»  
զանազան կողմերից գրած մի շարք լրջթակցու-  
թիւններ տպագրեց, որոնց մէջ սրտաճմլիկ դոյ-  
նեցով նկարագրված են գիւղացու վիշտն ու  
յուսահատութիւնը: Եւ ցնցող նկարագրութիւն-  
ների կարել է չը կայ: Երբ մի ժամվայ մէջ  
կարկուտի տարաքը չէնչաջնում է մի ամբողջ  
գիւղի ցանքերը, այդինքն, երբ յուսատու գա-  
րուած մի օրակնում փոխվում է, դառնում չոր  
ու անպտուղ ձմեռ և մարդկանց մի մեծ քաղ-  
մութիւն արտասուքով լի աչքերը ուղղում է  
դէպի երկինք և հարցնում է այնտեղից թէ ին-  
չով պիտի ապրեն իրանց երեխաներն ու անա-  
սուհները—ինչ երկար ու բարակ նկարագրու-  
թիւն է հարկաւոր: Հասկանալով այդ բնական  
աղէտի ամբողջ սարսափը, ինչ պիտի անենք  
մենք: Ողբերով և հառաչանքներով շատ հեռու  
չէ կարող գնալ ապրուստից զրկված ազգաբնա-  
կութիւնը, շատ շատ նրան մի կտոր հաց կը  
տան իրեն ողորմութիւն, հազար աղաչանքնե-  
րով և աղմուկներով մուրած մի կտոր հաց, որ,  
այնու ամենայնիւ, ընդհանուր աղէտը կարող է  
թեթեւացնել շատ ջնջին, հաւաքեա ոչնչութիւն  
կազմող չափով:

Դժբաղդութիւնների դէմ կուզել է հարկաւոր—  
այս է այն իմաստութիւնը, որին հասել է հա-  
զարաւոր դժբաղդութիւններ տեսած մարդկու-  
թիւնը: Եւ գիւղական տնտեսութեան ամենից  
շատ վնասող պատահանքներից մէկի, կարկուտի  
դէմ դառնված է գործնական միջոց: Դա ցանք-  
ներն ապահովութիւնն է: Եւ ահա այդ բանի  
վրա ենք մենք դարձնում գիւղական տնտեսու-  
թեամբ պարագլուխների ուշադրութիւնը:

Ձէ կարելի ասել թէ ցանքերի ապահովա-  
նութեան միտքը մի այնպիսի անյայտ բան է,  
որ պէտք է նոր տարածել մեր ժողովրդի մէջ:  
«Մշակի» լրջթակցութիւնների մէջ միշտ ցան-  
կութիւն էր յայտնվում, որ մեր գիւղերում էլ  
տարածվի ապահովագրութիւնը: Ուրեմն գա-  
ւառներում կան մարդիկ, որոնց յայտնի է թէ  
կան ընկերութիւններ, որոնք տալիս են գիւ-  
ղացուին կարկուտի պատճառած վնասները: Բայց  
պէտք է, որ անհատների հասկացածը դառնայ  
ընդհանուրի գիտակցութիւն, պէտք է, որ ա-  
պահովագրութիւնը իրագործվի որքան կարելի  
է շատ տեղերում: Ձենք թագցնում, այս բանը  
հեշտերից չէ: Ապահովագրութեան օգուտները  
հասկանալու համար պէտք է կուտորական  
յայտնի դարձացում. իբրև քաղաքակրթութեան  
մի գործոն, ապահովագրութիւնը կեանքի ան-  
հրաժեշտ պայման է առաջադէմ ազգւորի մէջ. իսկ

ինքնօգնութեան գաղափարից զուրկ մի ասիա-  
կան ժողովուրդ մեծ դժուարութեամբ կիմանայ,  
թէ ինչքն են մտածել և Նախք մարդիկ իրանց  
բարօրութեան համար: Հարկաւոր է, որեւէ  
ժողովրդականացնել գիւղական ապահովագրու-  
թեան այն տեսակը, որ մասնաւոր մեր ժողո-  
վրդին է հարկաւոր: Եւ այդ պարտքը ամենից  
առաջ, ի հարկէ, մամուլի վրա է ընկած:  
Մենք առաջնորդում հաղորդեցինք, որ Մոսկ-  
վայում գոյութիւն ունի ցանքերի ապահովա-  
գրութեան մի ընկերութիւն, որ ուղարկել է  
մեզ իր կանոնադրութիւնը: Հարկաւոր ենք հա-  
մարում համառօտ կերպով ծանօթացնել մեր  
ընկերացողներին այդ համակերկ ընկերութեան  
հետ:

Ընկերութիւնը հիմնված է 1877 թական-  
ինի և առևտրական նպատակներ չունի, այլ  
փոխադարձ ապահովագրութեան սկզբունքն է  
գործադրում, այսինքն իր անդամներին տալիս  
է այն վնասները, որ պատճառուում է կարկուտը:  
Ուրեմն ամեն մարդ, որ ապահովագրել է տա-  
լիս իր ցանքերը, պիտի ընկերութեան անդամ  
գրվի: Անդամվածքը ճիշդ որոշված չէ. նա  
կազմում է մի յայտնի տոկոս այն դուրմարից,  
որով ապահովագրվում են ցանքերը: Անդամա-  
վածքը կարելի է տալ ընկերութեան մասմաս,  
մինչև 12 տարի ժամանակով: Անդամ կարող է  
լինել և մի գիւղի ամբողջ հասարակութիւնը:

Ինչպէս է կատարվում ապահովագրութիւնը:  
Ահա մի օրինակ: Դիցուք Երևանեան նահան-  
գում ապրող մէկը ուղղւմ է ապահովագրել 20  
դեկտաւորն ցորեն: Միմիայինք թէ մի դեկտա-  
ւորնից սպասվում է 8 խուրճ ցորեն և ամեն մի  
խուրճը կը տայ 6 պոսկ հատիկ: Հետևաբար,  
20 դեկտաւորնից կը ստացվի 160 խուրճ և 1440  
պոսկ հատիկ: Եթէ ցորենի դիւրը, դիցուք, 60 կո-  
պէկ է (տեղական գներով), իսկ մի խուրճ յար-  
զը արժէ 20 կոպէկ, ուրեմն 20 դեկտաւորն  
խուրճի արժեքը թիւնը կը լինի. հատիկներ—864  
րուբլի, յարզ 32 րուբլի, ընդամենը 896 րուբ-  
լի: Երևանեան նահանգի համար ընկերութիւնը  
նշանակել է ապահովագրական գումարի իւրա-  
քանչիւր հարիւր րուբլուց 2 րուբլի 30 կոպէկ,  
ուրեմն 20 դեկտաւորն ցորեն ապահովագրողը  
պիտի վճարէ ընկերութեան 20 րուբլի 70 կո-  
պէկ և եթէ այդ տարածութիւնը կարկուտահար  
լինի, այն ժամանակ ընկերութիւնը կը տայ ա-  
պահովագրել տուողին նրա կրած վնասները,  
ինչպէս կը գնահատեն տեղական գներով:  
Յաջաւորելը կարող է ապահովագրել տալ իր  
արտերը նմանապէս մասերով. օրինակ, նա կա-  
րող է արդ 20 դեկտաւորնի 3/4 մասը ապահովա-  
գրել տալ, իսկ 1/4 մասը թողնել առանց ապա-  
հովագրութեան: Յիշենք, որ այս դէպքում ապա-  
հովագրել տուողը պիտի տայ անդամվածք 17  
րուբլի 92 կոպէկ, այսինքն րուբլուց 2 կոպէկ

կանից ուշ: Դուան չմերի մօտ նրան չըջապա-  
տեց մի անգլին խումբ կիսամերկ աղքատներին,  
որոնք պարզում էին դէպի նա իրանց ձեռները:  
Կոպիտ հայտնաբերելով վանեց նա նրանց իր  
մօտից: Բայց սովածութիւնից՝ թշուառները  
յանդգնացել էին և կատաղել գայլի պէս: Նը-  
րանք չըջան կազմեցին նրա շուրջը և հաց էին  
խնդրում ողորմաբան, խաւստ ձախերով: Նէր-  
լին արդէն կուսցել էր քար վերցնելու և նրանց  
վրա նետելու համար, որ յանկարծ նկատեց իր  
ժառային՝ հացի զամբիւղը զլինիս. խոհանոցում,  
գոմում և պարտէզում ծառայողների համար էր  
այդ հացը: Նէրլին զլինով նշան արեց մատա-  
կարարին, որ մօտենայ, և լիւր-լիւր բաներով  
վերցնելով հացը, բաժանեց թշուառներին: Յետոյ,  
նեքս մտնելով, նա պառկեց ու քնեց: Գնած  
տեղը նա կաթնածաճաւ եղաւ: Նա մեռաւ  
այնքան անակնկալ կերպով, որ դեռ անկող-  
նում էր կարծում իրան, երբ տեսա իր առաջ,  
մի լուսազուրկ տեղում, Միքայէլ հրեշտակապե-  
տին, որ լուսաւորված էր իր մարմնից բղնող շո-  
ղիքից:

Հրեշտակապետը ինչ որ բաներ էր դնում  
ձեռքին բռնած կշեռքի թաթերի մէջ: Նիկոլա  
Նէրլին նմարներից ծանրի մէջ ճանաչեց



(ցանցերի համար այս տոկոսն է նշանակված) և, ինչպէս ասացինք, այդ անդամավարը կա-  
րելի է մաս-մաս տալ 12 տարվայ միջոցով:

Ապահովագրութեան միջոցը համարվում է մարտի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը: Ապահո-  
վագրել տալու գործը ձևականութիւններով չէ  
ձանդաղեցնել: Գանձատեղը ընկերութեան  
պատրաստած բլանկի վրա գրել է տալիս բոլոր  
պահանջված տեղեկութիւնները և ուղարկում է  
այդ բլանկը ընկերութեան, և այնուհետև ըն-  
կերութիւնը կատարում է իր գործը, առանց  
տեղի ու տեղը նայելու այն ցանցերին, որոնք  
ապահովագրվում են:

Բացի արտերից, ընկերութիւնը ապահովա-  
գրում է և խողովը ու այլ արգելի այգիներ:

Մենք քաղցիցնք մի քանի հիմնական կանոն-  
ներ միայն. աւելի մանրամասն տեղեկութիւն-  
ներ ուսանալ կամեցողներին ընկերութիւնը ու-  
ղարկում է ձրի իր կանոնադրութիւնը և բա-  
ցատրութիւնները: Նստ ցանկալի է, որ մեր  
գաւառները հասկացող գիւղատնտեսները ձեռք  
բերէին այդ կանոնները, աւելի մօտիկ ծանո-  
թանային դրոշմը և մտցնէին մեր գիւղերում  
ապահովագրութիւնը: Մեծ նշանակութիւն ունի  
նախաձեռնութիւնը. երբ հասկացող մարդիկ կը  
սկսեն ապահովագրել տալ իրանց ցանքերը,  
այն ժամանակ գիւղացին էլ, որ օրինակի  
է սպասում, կը հետեւէ նրանց և այդպիսով մեր  
երկրի տնտեսութիւնը իւրաքանչիւր տարի ա-  
զատված կը լինի ծանր կորուստներէ:

Մեր ասածներին կաւելացնենք, որ ցանքերի  
ապահովագրութիւնը Ռուսաստանում բաւա-  
կան տարածված է և հետզհետէ լայն չափեր  
է ընդունում: Կարելի չը կայ խօսելու արտասա-  
մանի մասին, քանի որ այնտեղ վաղուց մար-  
դիկ ընտելացել են ապահովագրութեան դասա-  
զան տեսակներին:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը  
մեծ ծառայութիւն կը մատուցանէ այս գոր-  
ծում, եթէ տեղական լեզուներով մանրամասն  
խրատներ տալագրել տայ ցանքերի ապահովա-  
գրութեան մասին և մեծ նշանակութեամբ ձրի  
տարածէ մեր գիւղերում: Եւ կարող է նոյնպէս  
ժողովներ կազմել կառուածատէրերից և դնել  
այդ ժողովի առաջ մի այնպիսի կարևոր տնտե-  
սական հարցը, որպիսին է կարկուտի վնասնե-  
րից ազատվելը: Կենդանի գործը ապառաժներն  
էլ կը հալցեն, և մենք չենք կարծում, թէ մեր  
գիւղացուն իր օգուտը հասկացնելը ապառաժ-  
ներ հալցնելու չափ դժուար գործ լինի: Ցարի-  
նոր ընթացքում կրկնվող աղէտները—երաշ-  
տութիւն, մարիս, դաշտային միջներ, հեղեղներ—  
այնքան թուլացրին, ուժասպառ են դարձրել  
մեր երկիրը, որ մենք համարենա խրոնիկական  
սովին ենք հասնում: Եթէ բոլոր պատահարնե-  
րին դիմարել չենք կարողանում, ինչպէս չը փո-  
ձենք ազատվել դրնէ նրանցից մէկից, որ նոյն-  
պէս շատ անգութն է—կարկուտից:

Այստեղ դնում ենք ապահովագրական ընկե-  
րութեան հասցէն. Общество взаимнаго страхо-  
вания посевовъ отъ градобитія, Москва, В. Лубян-  
ка, д. Ивановскаго монастыря.

ՆԱՍՏԱԿ ԴԻԼԻՋԱՆԻՑ

Յուլիսի 19-ին

Նրանք, Բագուի և Քիֆլիսի շրջեր ուղար-  
կել են Նիկիթան շատ ընտանիքներ: Բագուցի-  
ներն ու Քիֆլիսցիները լաւ իմանում են ամա-

զանազան այրիների պատկանող լանդազին ի-  
րերը, որոնք պահված էին իր մօտ իբրև գրաւ,  
բազմաթիւ ծրարներ դրամներով, որ ինքը հա-  
ւաքել էր ապօրինի միջոցներով, նրանց թուով  
իրան լաւ յայտնի հիանալի ոսկէ գրամները, ո-  
րոնք միմիայն նրա մօտ էին գտնվում և ձեռք  
էին բերված վախճառութեամբ կամ խաբէրաշու-  
թեամբ: Նէրլին հասկացաւ, որ Միքայէլ Տրեշ-  
տակապետը կըռում է նրա կեանքը, որ այժմ  
հասել էր իր վախճանին:

Նա ընդունեց ուշադիր և մտազբաղ կերպա-  
րանք:

—Տէր սուրբ Միքայէլ, ասեց նա, եթէ դու  
դնում էք այդ նժարի վրա այն բոլոր չափը, որ  
ես ստացել եմ կանաքի ընթացքում, այն ժամա-  
նակ դրեք, ինչդրեմ, միւսի վրա այն հոյակապ  
հիմնարկութիւնները, որոնցով ես արտայայտել  
եմ շարունակ իմ բարեպաշտութիւնը: Մի մո-  
ռացէ՛ք ոչ Տիրին հասկացաւ, որի օգուտն  
հանդանակած փողերից երբորդ մասը իմ նուի-  
րածն է, և ոչ քաղաքի մօտակալը զոտնող  
հիւանդանոցը, որ ամբողջապէս իմ հաշուին  
է շինված:

—Մի վախճա՛, Նիկիթա Նէրլի, պատաս-  
խանց հրեշտակապետը, ոչինչ չեմ մոռանալ,—

բանցից օգտվելու ձեռքը: Սարբում են յաճա-  
խակի դրասանքներ, ամեն կերպ աշխատում են,  
եթէ ոչ ոք օրը, դրնէ մեծ մասը տնտեսում  
մաքուր ու զով օգուտ անցկացնել, իսկ մեր  
երևանքները մտել են Սլաւոլայի թողերի  
ու աղբերի մէջ ու շարունակում են նոյն փակ  
և կղզիացած կեանքը վարել, ինչպէս Նրանում:  
Այստեղ էլ անսովոր չղբեր են անում, որ յի-  
չեցնում են նոյն իսկ Նրանը: Երկարատե ե-  
րաշտը վատ աղղեցութիւն է արել մօտակալ  
գիւղերի հոնձի վրա:

Շաբաթ երեկոններ և կիրակի պատարագնե-  
րին գիւղի ժամատունը լցվում է աղօթողներով,  
որոնց դրաւում է փոքր ի շատ կանոնաւոր երգե-  
ցողութիւնը, շնորհիւ մի քանի ուսուցիչներին:  
Ամեն անգամ էլ Մակար Բարիուղարեան եպիսկո-  
պոսը պատուում է հասարակութիւնը իր երկար  
բարոյգներով, որոնց անհետաքրքիր բովանդակու-  
թիւնը երբեք չէ սաղում տիրող շրջերին: Օրի-  
նակ. «Մեղքը մեր մէջ մտնում է կամայ աշ-  
քերից, կամ աղանջներից ու ըթից, կամ բերա-  
նից և այլն. չը մեղանջելու համար պէտք է  
զսպած պահենք այդ զգալարանքները: Ուրեմն  
ով ուզում է չը մեղանջել՝ պէտք է տնից չը  
դուրս գայ, դուրս գալիս էլ պիտի փակէ աշ-  
քերը, բերանը, բաժակի ճիւղի ականջները և մի  
ուղեցոյցով դնալ մայրի անտառը դրանիւր:  
Ջարմանալի է. կարծես բարոյի համար աւելի  
յարմար նիւթ չը կայ, քան այդ հին սխօլատիկ  
ճոռածաբանութիւնները: Բայց եպիսկոպոսն ա-  
տում է, որ «մենք աղբի հացն ենք ուտում,  
պէտք է աղբին սեռայնք»—դատարկ լարողնե-  
րով: Մինչև սեռոնի վերջը 6 բարոյ էլ կայ,  
համբերութիւն լսողներին:

Մօտիկ Հաղարծնի վանքը իր խիտ անտառով  
հոգածութեան նիւթ է դառել Վեհափառ Կա-  
թողիկոսին, որի համար ինքը ամսին 15-ին ան-  
ձամբ եկաւ Հաղարծնի՝ ամեն բան իր տեղում  
դիտելու: Վանքն ու իր անտառը անխնամ  
դրութիւնից ազատելու համար որոշվեց մի  
հմուտ կառավարի կարգել: Այդ գործի համար  
ի նկատը աւանդի ուսուցիչ Ստեփան Գաւ-  
թիկանը, որ տեղացի լինելով լաւ տեղեկ է  
գործին: Վեհափառ Կաթողիկոսը գիշերը մնաց  
Հաղարծնի, 16-ին եկաւ Նիկիթան, իջաւ պ-  
Քեանդարեանցի տունը, ճաշեց պ. Ն. Աթաբե-  
կեանցի մօտ և ապա մեկնեց Էջմիածին, հետը  
տանքով Ս. Դաւթեանին, պայմանները մասին  
մանրամասն խորհրդակցելու համար Ցանկալի  
կը լինէր, որ այս հարցը շատ չը ձգձգվէր և  
սովորաբար՝ դանդաղորդութեամբ ու վանական  
անհոգութեամբ զոհ չերթար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեռելոցի տօնի պատճառով «Մշակի» յաջորդ  
համարը լոյս չի տեսնի երեքշաբթի օր, այլ կը  
հրատարակվի չորեքշաբթի օր, յուլիսի 28-ին:

Հինգշաբթի, յուլիսի 22-ին, Մայր Փագուհի  
Մարիա Ֆեօդօրովայի անուանակոչութեան տօ-  
նի օրը, կատարվեցին մաղթանքներ Բուսաց  
Սրճի մայր-եկեղեցում և ուրիշ դաւանու-  
թիւնները տաճարներում: Երեկոյեան տեղի ու-  
նեցաւ լուսավառութիւն:

Պետերբուրգում հրատարակվող «Школьное Хо-  
зяйство» անունով պարբերական հանդէսը այս  
տարվայ յունվարից լոյս է տեսնում գիւղատն-  
տես Աւետիս Քալանթարի խմբագրութեամբ:

և իր փառանկ ձեռներով դրեց թիթիւ նժարի  
վրա Տիրաւոր տաճարը և հիւանդանոցը: Բայց  
նժարը չը հակվեց: Բանկիրը սաստիկ անհա-  
գատութիւն սկսեց դգալ:

—Տէր սուրբ Միքայէլ, դիմեց նա նորից հրեշ-  
տակապետին. դարձեալ մի լաւ փնտռեցէ՛ք: Կշեռ-  
քի այդ թաթի վրա չը կայ իմ շինել տուած շքեղ  
անօթը օրհնած ջրի համար՝ սուրբ Յովհաննէսի  
տաճարում, չը կայ սուրբ Անդրէասի եկեղեցու  
ամբիւնը, որի վրա ամբողջ հասակով պատկե-  
րացած է Տէրն մեր Յիսուս Քրիստոսի մկրտու-  
թիւնը. շատ թանգ է նստել ինձ այդ պատկերը:  
Հրեշտակապետը դրեց կշեռքի նժարի մէջ  
հիւանդանոցի վրա ամբիւնն ու օրհնած ջրի ա-  
նօթը, բայց նժարը չը հակվեց դարձեալ: Նի-  
կիթա Նէրլին դգաց, որ ճակատը ծածկվում է  
սառ ըրտիներով:

—Տէր հրեշտակապետ, հարցրեց նա, հաւա-  
տացած էք արդեօք, թէ ձեր կշեռքը կանոնա-  
ւոր է:

Սուրբ Միքայէլը ժպտալով պատասխանեց, թէ  
կշեռքը կատարեալապէս ճիշդ է, որովհետև այն-  
պէս չէ շինված, ինչպէս Պարզիլ գրաւատանը  
և Վենետիկի սեղանաւորները մօտ գործածվող  
կշեռքները:

Հանդէսը լոյս է տեսնում երկու ամիսը մի ան-  
գամ 50 երեսից բաղկացած գրքովներով, դար-  
եղաբով նկարներով: Հանդէսի նպատակն է  
նպաստել դպրոցներին բանալու և պահպանելու  
գիւղատնտեսական ագարակներ և պարտէզներ:  
Կիրաւատեղի յօդուածները ծանօթացնում են  
գիւղատնտեսութեան դանադան ճիւղերի հետ:  
Առաջին տեսարաններում զետեղված են խոշոր  
յօդուածներ կաթնատնտեսութեան, մրգաբու-  
ծութեան, պարտիզպանութեան և այդգործու-  
թեան մասին և մանր նկատողութիւններ՝ վնա-  
սակար միջոցներով դէմ կուելու միջոցներին  
և տնտեսութեան մէջ ուրիշ կարևոր նիւթերի մա-  
սին: Հանդէսը տարեկան արժէ 1 ռուբլի, հաշ-  
ւելով դրա մէջ և պատի ծախքը: Հանդէսը մին-  
չև այժմ, երբ տարվայ ընթացքում, հրատա-  
րակվում էր պրօֆէսոր Բուդալու խմբագրու-  
թեամբ:

Բագուում կազմվում է մի նոր ակցիօներական  
ընկերութիւն «Աւելական» անունով, 1,600,000  
ռուբլի հիմնական դրամադրով, բաժանված  
6400 ակցիայի, իւրաքանչիւրը 250 ռուբլի ար-  
ժողութեամբ: Ընկերութեան նպատակն է շահա-  
գործել նաւթի և ուրիշ նիւթերի հանքեր, բա-  
ցի ոսկուց և արծաթից, բացի այդ պահել թու-  
ջի, պղնձի, երկաթի մեքենագործարան և ձու-  
լարան: Հիմնադիրներն են Պ. և Գ. Յակո-  
բեանները:

Քիֆլիսի կ ր ու ժ օ կ ի ձմերային բնակարա-  
նի բակում այժմ կառուցվում է առանձին շի-  
նութիւն, որտեղ պէտք է գործէ յատուկ մեքե-  
նայ՝ կրոժօկի բնակարանը երեքտարակաթնութեամբ  
լուսաւորելու համար:

Ակցիօներական «Бакинский трубопроводъ» (Բա-  
գուի խողովականցք) ընկերութիւնը, որ ունի  
6,000,000 ռուբլի հիմնական դրամադրով, բա-  
ժանված 2400 ակցիայի, իւրաքանչիւրն 250  
ռուբլի արժողութեամբ, խնդրամատոյց է եղել  
Պետերբուրգի բօրային կոմիտէին՝ մտցնելու  
բօրային բեւոյրներն մէջ ընկերութեան ակցիա-  
ները:

Ստացանք հետեւեալ նոր հրատարակութիւն-  
ները. 1) Ա տ ր պ ե տ ի «Նախիջաւան» պատմական  
հետազոտութիւնը, որ բաղկացած է երկու յօ-  
դուածներից, որոնց վերնագիրներն են՝ «Իսլամի  
խալիֆը» և «Շերիաթի մէջ Կողմնակի» Գրքը բաղ-  
կացած է միջնադիր 99 երեսից, տպագրված է  
Նոր-Նախիջաւանում և արժէ 30 կոպէկ: Հրատա-  
րակիչն է Զաւադ-բէգ Բալուղեանը. 2) Ն. Քոփ-  
չեանի «Իսլամի պատմական տեսութիւնը, բաղ-  
կացած փոքրագիր 78 երեսից. գրքի մէջ  
կան իսլամի գործողների պատկերները. գինն է  
30 կոպէկ:

Բագուի մօտ գտնվող Բիբի-Հէյրաթում մե-  
քենագործարան բանալու և նախաճարեր փոքե-  
լու գործով զբաղվելու համար՝ հիմնվում է մի  
նոր ընկերութիւն կէս միլիօն ռուբլի հիմնական  
դրամադրով, բաժանված 1000 ակցիայի, իւրա-  
քանչիւրը 500 ռուբլի արժողութեամբ: Հիմնա-  
դիրներն են՝ Ս. Սալոմոն և Լ. Բիւրանսկի: Ընկե-  
րութեան անունն է. «Акционерное Общество Би-  
би-хайратского механического завода и производства  
буровыхъ работъ»:

—Ինչպէս,—հարցնեց Նիկիթա Նէրլին՝ վա-  
խից գուռաւով, կը նշանակի՞ այդ տաճարը,  
այդ ամբիւնը, անօթը, հիւանդանոցը իր մահ-  
ճակներով, այդ բոլորը մի չիւղից, մի հիւլէից  
էլ աւելի չէ կշռում:

—Ինչպէս տեսնում էք, Նիկիթա, ասեց հրեշ-  
տակապետը, ձեր անարդար գործերը անհամե-  
մատ աւելի ծանր են՝ քան ձեր աննշան բարի  
գործերը:

—Ուրեմն դժմը պէտք է երթամ ես, ասեց  
Յիւրենտային, և ատամները չիւլիւլակցին սար-  
սափից:

—Համբերութիւն, Նիկիթա Նէրլի, առարկեց  
երկնային գնահատը, համբերութիւն: Մենք դեռ  
չենք վերջացրել: Դեռ այս բանը մնում է:

Ս. երանեալ Միքայէլը վերցրեց այն սև հա-  
ցերը, որ նախընթաց երեկոյեան հարուստը բա-  
ժանել էր աղքատներին: Նա դրեց այդ հացերը  
բարի գործերը պարտականոք նժարի մէջ, և այդ  
նժարը յանկարծ իջաւ ներքև, մինչդեռ միւսը  
բարձրացաւ, ու երկունս էլ կանց առան մի  
գծի վրա: Լծակը չէր հակվում այլ ես դէ-  
պի աջ կամ ղէպի ձախ, և սլաքը ցոյց էր տա-  
լիս կատարեալ հաւասարակշռութիւն երկու նը-  
ժարների մէջ:

Բագուի «Նախիջաւան» ընկերութիւնն կոչված ակ-  
ցիօներական ընկերութեան տեղեկագրից երևում  
է, որ վերջին հաշուհամարում, այն է 1898  
թուի ապրիլի 1-ից մինչև այս տարվայ ապրիլի  
1-ը, ընկերութիւնը ունեցել է 100 նաւթահոր,  
որոնցից ստացել է 25 միլիօն պուլ Նաւթ. նա-  
խորդ տարում 28 միլիօն: Ընդհանուր եկամուտ  
ունեցել է 2,124,600 ռուբլի: Նաւթը ծախվել է  
միջին թուով 9 կոպէկով: Զուտ արդիւնք ստաց-  
վել է 1,060,738 ռուբլի: Ընկերութիւնը ունի  
հիմնական դրամադրութիւն 2,800,000 ռուբլի և  
պահեստադրամ 2 միլիօն ռուբլի:

ԱՆԱԼՑԻԱՅԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 18-ին,  
ժամը 11-ին, գրադարան-ընթերցարանի դահլի-  
ճում տեղի ունեցաւ Բարեգործական ընկերու-  
թեան տեղական ճիւղի անցեալ ամսի 16-ին  
կայացած ընդհանուր ժողովի նիստի շարունա-  
կութիւնը, ներկայութեամբ 20 անդամներ: Այդ  
օրվայ ներթափան հարցերն էին. 1) Ինչ անել  
ընկերութեան գրադարան-ընթերցարանի սե-  
փական շինութիւնը, և 2) Ինչ անել գրադա-  
րան-ընթերցարանի գրքերը, լրագիրները և իրե-  
ղէնները: Գրադարանի շինութեան մասին ձայ-  
ները բազմութեամբ որոշվեց՝ յանձնել քաղաքիս  
ս. Փրկիչ եկեղեցուն այն պայմանով, որ տարե-  
կան վարձը, որ կարող է մօտ 300 ռ. լինել,  
յաակացվի եկեղեցու արքայացի գանձարանին,  
իսկ եթէ, հակառակ դէպքում, եկեղեցուն իրա-  
ւունք չի տրվի այդպիսի պայմաններ կատա-  
րելու, շինութիւնն ամբողջովն ընծայել Ա-  
խալցիայի ս. Վարդանանց եկեղեցուն: Գա-  
լով երկրորդ հարցին, այն է՝ Ինչ անել գրա-  
դարանի գրքերը և իրեղէնները, ժողովը ո-  
րոշեց՝ բոլոր գրքերը, էժանացրած գներով, ծա-  
խել ընթերցանի հասարակութեան, իսկ մնա-  
ցած անվճար գրքերը և լրագիրները վաճառել  
հասարակ թղթի գնով վաճառականներին: Դրա  
համար ժողովը որոշեց իր միջոց մի մասնաժո-  
ղով ընտրել:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Դեռ Բիբի-Հէյրաթի  
հողերի աճուրդը հաստատված չէ. հաւանական  
է, որ շատ մօտիկ ապագայում հաստատվի: Հե-  
տապէս փողի պակասութիւնը աւելի կը սասու-  
կանայ, որովհետև հողեր վերցնողները պէտք է  
դաշն կապեն լեռնային վարչութեան հետ՝ մըտ-  
ցնելով մի և նոյն ժամանակ արքունա-  
կան գանձարանը կէս տարվայ կանխավճար,  
որը կազմում է մօտ 1,250,000 ռուբլի: Թէ որ-  
տեղից և ինչ տոկոսով բազմաթիւ պէտք է  
լրացնեն այդ գումարը, ցոյց կը տայ մեզ մօ-  
տիկ ապագան. սակայն կարծում ենք, որ մի-  
այն բանկերով չեն բաւականայ, այլ ստիպված  
կը լինեն դիմել նաև հետաւոր մարդկանց, և  
վճարել այժմանից մեծ տոկոսներ:

ՀԻՆ-ՆԱԽԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Արդէն  
երկու օր է, որ Նրանին նահանգապետ կոմս  
Տիգլանաւզէն եկել է Նախիջաւան: Այդ առիթով  
քաղաքացիները և գիւղացիները խումբ-խումբ  
գալիս են կոմսի մօտ և գանգատում ջրի պա-  
կասութեան վրա և ջուր խնդրում: Բայց նա-  
հանգապետը ձրտեղից ջուր ձարէ նրանց հա-  
մար. անձրե չը կայ, գետն էլ ցամաքել է: Դեռ  
լաւ է, որ գիւղացիներից շատերի մէջ յղացել է  
միտք՝ Գանձակի նահանգի «Քաղաք-շաք» առ-  
ված դետը, որը գտնվում է Նախիջաւանի գաւա-  
ռի սահմանի մօտերում, շուտ տալ դէպի այս  
կողմ, պեղելով 15—17 վերստ լեռնապատ տա-

Բանկիրը չէր հաւատում իր աչքերին:  
Փառանկ հրեշտակապետը ասեց նրան.

—Ինչպէս տեսնում ես, Նիկիթա Նէրլի, դու  
արժանի չես ոչ դժոխքին, ոչ արքայութեան:  
Գնա՛: Վերադարձի՛ր Յիւրենտային: Բազմացրու  
քո քաղաքում այդ հացերի թիւը, որ ինքը քո  
ձեռքով գիշերային միութեան մէջ տուեցի,  
չբաւորներին այնպէս, որ ոչ որ չը տեսաւ քեզ,  
— և դու կը փրկվես իմացի, երկինքը չէ բա-  
ւականանում նրանով, որ բանում է իր դռները  
զղջացող աւազակի և արտասովոր անառակ կնոջ  
առաջ: Աստուծո ողորմութիւնը անհուն է. նա  
կը փրկի նոյն իսկ հարուստին: Փրկվի՛ր: Դա-  
տացրու այդ հացերի թիւը, որոնց կշիւր իմ  
կշեռքում յայտնի է այժմ քեզ: Գնա՛:

Նիկիթա Նէրլին դարձեալ իր անկողնում  
Նա վճռեց հետևել հրեշտակապետի խորհրդին  
չառացին չբաւորներին հացը, երկինք արքայու-  
թիւնը մտնելու համար:

Այն երեք տարվայ ընթացքում, որ նա անց-  
րեց երկրիս երեսին իր առաջին մահից յետոյ,  
նա կարեկեց էր միւս թշուառներին:

Տ. Յովհաննիսեան

րածուի  
նահանգ  
նարկէ,  
պէս օգ  
ծիքն է  
այնքան  
մինչև է  
հարկաւ  
կարծիք  
իր հաւ  
թանգ  
լինի: Ս  
թեան  
բարձեղ  
տունը  
դեռ ա  
հարևա

Էջմի  
մեզ գր  
բաւար  
մի քան  
րուբլի,  
գինը  
բարաւ  
հաճ  
օրերս,  
ձը հա  
որպէս  
սով ի  
բայց  
Ղաղար  
շուտով



բաժնույն Սյո մասին խնդրեցին եղան պահանջադրանքներ, որ կառավարութիւնը ձեռնարկէ, իսկ ժողովուրդը պատրաստ է նիւթապէս օգնելու Բայց, ինչպէս ընդհանուր կարծիքն է, Բաղար-չապ գետի այս կողմ ուղղելը անբնական է հետ չէ—երկու հարկու հազարից մինչև երեք հարկու հազար րուբլի գումար է հարկաւոր. որոշակի տայ ժողովուրդը: Մեր կարծիքով, ամենից լաւ է՝ իւրաքանչիւր գիւղ իր համար քարհէղինք պատրաստէ, որ շատ թանկ չի նստի իրանց համար և շատ հեշտ կը լինի: Մի քանի գիւղեր, վստահ չը լինելով ընդհանր և Նախընտրական գետի վրա, իրանց համար քարհէղինք (աղբիւրներ) են հանել և անտրտուն ջրում են թէ արտերը, թէ այգիները և դեռ աւելորդ մնացած ջուրը ծախում են միւս հարևան գիւղերին:

Էջմիածին գաւառի ՍԱՐԳՍԻՍԱՅԱՆ գիւղից մեզ գրում են. «Յորենի ցանքերն այս տարի բաւարար հունձ տուին: Յորենի խալվարը, որ մի քանի օր սրանից առաջ արժէք 20—25 րուբլի, այժմ արժէ 30—32 րուբլի: Յորենի գետը բարձրացրին մի քանի հարուստ ամբարտեղներ, որոնք անցնել տարվանից պահած ունեն ցորենի մեծ քանակութիւն, և այս օրերս, երբ սկսեց Սարգարապատում հունձը հասնել, վրա պըծան գիւղերից գնելու, որպէս իր բարձրացնեն ցորենի գինը և այդպիսով իրանց հին ցորենը թանկ գնով ծախեն. բայց չնորհիւ մեր գաւառամասի պրիստա պ. Նազարեանի ձեռք առած լուրջ միջոցները, չուտով անհետացան:

Նոյն գիւղից մեզ գրում են. «Սյուսից եղանակը անտանելի չոր է, անձրև բոլորովին չը կայ. եթէ չը հաշուենք այս տարվայ մայիս ամսի 4-ին և 5-ին եկած, այն էլ ոչ այնքան յորդանքներն, մի տարուց աւել է ինչ անձրև չենք տեսել: Սարգարապատի մօտով անցնող Կարս-Ներսիսեան երկաթուղու գծի աշխատութիւնը Սարգարապատի մօտ դեռ չէ սկսվել, բայց չուտով կը սկսվի. այդ մեր բանուր դասակարգի միակ յոյն է, որը միջոց կը տայ աշխատելով ամօժանակ իր օրակա տարուստը հայրանայթել:

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր գիւղի աղասակների ընտրած քահանայացուն, երկար ժամանակ Քիֆիս մնալուց և, ինչպէս պատմում են, հասարակութեան փողերը ծախելուց յետոյ, Վարաքիսայի վրայով գնացել էր Էջմիածին և այնտեղ էլ լսելով, որ Կաթողիկոսը Դիլիջան է, գնաց Հաղարծին: Ներկայացաւ Կեհայանին, թէ ոչ, չը գիտենք, միայն այսօր Դիլիջանում ներկայացան Կաթողիկոսին երկու զատ-զատ պատգամաւորութիւններ, որոնցից մէկը խնդրում էր յիշել քահանայացուն չուտ ձեռնադրել, իսկ միւսը խնդրում էր խկի չը ձեռնադրել: Բանը նրանումն է, որ օտարականները և տեղական ինտելիգենցիան տիրացու Քեհայանի քահանայանուն դէմ են:

Ճիրբայել գաւառի ԱՌԱՔԵԼ գիւղից մեզ գրում են. «Մեր կողմերում էլ շատ ժամանակ է ինչ անձրև չէ կաթել: Մի շաբաթից աւել է, որ թանձր մեզ է պատած: Անվտանգ հիւանդութիւններ շատ կան մարդկանց մէջ: Տաւարի հիւանդութիւնը թէև մեր գաւառի շատ տեղերում է տարածված, բայց մեր և չրջակայ գիւղերում դեռ ոչ մի դէպք տեղի չէ ունեցել: Հունձը վերջացած է: Յորենի բերքը իրար խառնված: Կարելի է ասել, ամբողջ Պարսկը պարում է:

Հին-Նախընտրական գաւառի ԿՈՒԼԻԲԵԿԻԶԱ գիւղից մեզ գրում են. «Այս մի ամսից աւել է, որ Հին-Նախընտրական գաւառը անձրևի երես չէ տեսել, որի շնորհիւ Նախընտրական գետը, որը ոռոգում է այդ գաւառի մի շարք գիւղեր, ընկած նրա այս և այն կողմը, համարեա թէ բոլորովին ցամաքել է, թողնելով գիւղական տարրը վերին աստիճանի անել վիճակի մէջ: Իւրաքանչիւր գիւղում թշուառներից շատերի այգիները, որոնք նրանց ապրուստի միակ միջոցն են կազմում, չորացել են. իսկ մի քանիսներն էլ, որոնք դեռ յոյսերը չեն կորցրել, իրանց կին-աղջիկներով շալակած կժով ջուր են կրում և ամբողջ ամառն մի վաղի վրա, որ չը չորանան: Երէկ Քիւլմափա գիւղի Նախնակ քահանան, ամեն տեղից յոյսը կտրած, վարձել էր 8—10 մշակներ, որոնք մօտակայ առուակից շարունակ շալակով ջուր էին կրում և ամբողջ իւրաքանչիւր վաղի վրա մի-մի կուծ. բայց, մեր կարծիքով,

դա մի և նոյնն է ծառաւ մարդուն ասել թէ՛ մի, կամ երկու գաղ ջրով ծառաւ յաջեցրու: Եւ իրօք, 25—30 տարվայ վաղերը, որոնց արմատները շատ խոր են գնացել, ինչպէս կարող են մի կուծ ջրով իրանց ծառաւ յաջեցնել: Ահա թէ յուսահատութիւնը ուր է հասնում մարդուն:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՏՐԱՆՍԻՍԻՏԻՑ

Պարիզ, յուլիսի 14-ին

Առհասարակ Պարիզում շարժումն իր գագաթնակէտին է հասնում երեկոյեան. ցերեկվայ ըզբաղմունքները մեծամասնութեան արգելք են դառնում ընկնել աղմկալի զուարճութիւնների գիրկը: Այլ է երեկոյն. խանութները փակվում են, գործարհներն աղատ են, բանւորներն ու բանւորականները գործարաններից կամ մասնաւոր աշխատանքի տներէջ դուրս են թափվում, և սկսվում է մի համարեա խելագար շարժում, մի տենդոտ իրարանցում: Քաղաքն էլ այդ ժամին մի առանձին գրաւի տեսք է ընդունում, մանաւանդ մեծ բուլվարներում, որ դանդաղ են նշանաւոր կաֆէները: Հաղարաւոր ճրագները մեծ հայելիների մէջ արտացոլելով, կարծես հրաւրում աչքով են անում անցորդներին. պնդված թափուռաշրջիկ, կամ աւելի ճիշդ գիշերաշրջիկ աղիկները այդ մեծ կաֆէների առաջը կամ շուրջն են համախմբվում. սկսվում են գայթակղել տեսարանները անվերջանալի շարքեր: Երեկոյեան Պարիզն ամբողջապէս կիրք է...

Այսօրվայ մեծ տօնի պատճառով երեկոյեան ժամը 7-ից փողոցները համարեա անանցանելի են դարձել. ամեն կողմ բաղմունքներ անհամար է: Տնից դուրս է եկել, ով միայն կարողացել է Հրաւրաւորութիւն է. քաղաքը կտրած է լոյսի մէջ. կառավարական շէնքերը, մասնաւոր տները, բուլվարների ծառերը, թատրոնները, գոյնգոյն լապտերներով ծածկված են: Գեղեցիկ է Պարիզը այս երեկոյ: Ամբողջ զուարճանում է, ցնցող, յախուռն զուարճութիւններով: Անվերջ հանդիսերից բխացած ներկերը գրգռելու համար պէտք է զգացվում շարունակ նորանոր միջոցների դիմել. դարձանալի չէ, որ Պարիզը մարմնի ամենատեղը բաւականութիւններ ստեղծելու անքնն հաշակված է:

Զուարճութիւնների համար այստեղ ինչ որ կատարվում է, բոլորը կամ վերին աստիճանի նոր է, գրգռել, մարդու զգայականութեան վրա ազդող, կամ կատարի, ցնցող: Նայեցէք այս հակադրականները. իր 10—15 մէտր, գույն և աւելի բարձրութիւն ունի. շառաւիղներից կախկախված են զամբիւղներ, որոնց իւրաքանչիւրի մէջ կարող են նստել երկու հոգի, միայն երկու գանգուր զոյգերը տեղ են ընդել այնտեղ, անխել թաւալվում է և այդ զոյգերը, իրանց զամբիւղով խելագար պողոտաներ են կազմում տարածութեան մէջ... Ներքուստ, հրապարակի վրա, կամ փողոցի մէջ պարեր են սկսված: Պարում են մեծ, փոքր, մաքր, կին, զոյգ-զոյգ, ծանօթ, թէ անծանօթ, այդ մի և նոյնն է: Ուրբեր են սրանք, որոնք, որոնք են դուրս թափվել, գոտաւ է որոշել. Պարիզի փող խելոտ ընդարձակ է: Կաֆէներն առաջ դարձելով դաւաճանները զատարկելուց յետոյ նոյնպէս պարում են զինւորն և պնդված կինը, ուսանողն ու բանւորն, մտադրած ու աւտարականը, կաֆէների ծառայողներն ու աղախները իրար խառնված: Կարելի է ասել, ամբողջ Պարիզը պարում է:

Այսպէս է ֆրանսիացին: Նրա ուրախութիւնը ու տրամոլութիւնը, ծիծաղն ու արցունքը, լրջութիւնը անպակաս են խառնված, որ անծանօթ մարդը կարող է հեշտութեամբ թիրիմացութեան մէջ ընկնել և համարել ֆրանսիացուն թեթեւամիտ, դատարկաշրջիկ, լրջութիւնից դուրս: Բայց այդպիսի մի կարծիք չարաչար սխալ կը լինի: Ֆրանսիացին կենքի մարդ է. ձախորդութիւնների մէջ դիմացկուն, իր ամենալուրջ գործողութեան մէջ անհոգ, անմեղ կոմիկութեան կարծես մի խառնուրդ կայ. ծանր քաղցներում դուրս մահի չի տայ նա, թախիծն իսպառ չի խելիլ նրան. կուտում է ծիծաղելով, մեծանուն է՝ ժողովուրդ, ցոյցեր է անում ըստ երկոյթին հանգրով, բայց այդ բոլոր դէպքերում, իր բոլոր շարժումների մէջ նա իրան յատուկ լրջութիւնն ունի, ֆրանսիական լրջութիւն, որ նման է ոչ մի աղիկ լրջութեան: Այսպէս՝ հինց այսօր Շատրըն թատրոնի առաջ, հրապարակներում, կաֆէներում ամբողջ չէ պարում.

հաղարաւոր բաղմունքներ մեծ չրջան կազմած ոտակալների շարքի յետեւում կանգնած սպասում է: Ժամերով սպասում են, մոռացել են և՛ իրանց զուարճութիւնները և՛ պարերը, թէև կանգնած տեղում համարեա իւրաքանչիւրը նորը սրախօտութիւններ է անում: Իմ հարցին՝ թէ ինչ կայ, պատասխանում են, «Մարշալը թատրոնումն է, սպասում ենք, որ դուրս գայ: Եւ այս բոլորն ասում են այնպիսի լրջութեամբ, որ կարծես այդ քաղցին խնդրը վերաբերում է ամբողջ Ֆրանսիայի բաղդին: Եւ սպասում են աչքերը տնկած թատրոնի դռները ուսման բարձրացել են ծառերի վրա, նստում են. յանկարծ կատաղի ծափահարութիւններ և որոտագին vive l'armée! vive l'armée! երևացին Մարշալի միսիոյայի զինւորները, սուղանցիկ սևամորթ հրապանաձիգները. նրանք հանրակառքերի մէջ են շարվում՝ դէպի կայաւրան և ապա Աֆրիկա ճանապարհ ընկնելու համար: Գլխարկները ճօճվում են օդի մէջ, կեցցէները ձայնից օդը լնդում է և խեղճ վայրենիները իրանց պողոտան աչքերով նայում են այս ու այն կողմ, լսում են այդ բոլորը՝ ըստ երևոյթին խրտուած, աչքած, թէ ինչ կայ, ինչն են գտնում: Եւ այն, ինչպէս են կանչում, ոչ թէ խառն ի խուռն, յետ առաջ, աղ միասին, տակտով, առանձին չափով, կարծես երաժշտական խօր լինի, որին առաջնորդում է երաժշտապետը: Այս ժողովուրդն այնքան անգամ է կեցցէները աղաղակում, որ դրա համար էլ մի առանձին մեթոդ է մշակել:

Ընդհանուր ներդաշնակ vive-ների մէջ մի պատանի յանկարծ իր ձայնով դիտստանաւ և կազմում. նա թառել է մօտակայ ծառի վրա և այնտեղից մենակ գոռում է «Mort aux juifs!» ոտակալներն սկսում են նրան ցած բերել ծառից, որովհետև յանկարծակի այս բաղմունքները կարող է vive-ները դադարաւանել և «Mort aux Juifs!» պոռալ Բայց անհ դուրս եկաւ նաւ Մարշալը. երիտասարդ մարդ է, նիհար, մաշված դէմքով, փոքրիկ միտրոլով, խոր ընկած, բայց կենդանի աչքերով: Չը նայելով իր արտաքին խեղճութեան, նա ըստ երևոյթին աշխատում է արի դիրք ըռնել, այսպէս ասած փայլել. առհասարակ այս մարդը չուտ ծախսեց իրան. փառք իր հետ էր, բայց ինչն ընդառաջ վազեց: Ամբողջ այդ չէ ընում, «vive Marchand!» հնչվում է ամեն բերանից: Կառքն անցաւ, սևամորթ զինւորները նոյնպէս գնացին. ամբողջ մի փոքր տեղ գնաց նրանց ետևից, շարունակելով իր ծափահարութիւնները և կեցցէները: Երբ կառքերն իսպառ ծածկվեցին, մարդիկ դնացին դէպի զուարճութեան վայրերը, դէպի կաֆէները, դէպի կարոտէները, դէպի պարերն ու երաժշտութիւնը: Քաղաքացիական պարտքը կատարված էր: Ֆրանսիային այսօր օրինակ ցոյցերի վրա նայում է որպէս քաղաքացիական պարտքի վրա. նա այժմ պարզապէս ծափահարում է, քաջալերում, կամ անարգում, յանդիմանում մէկին: Սուր միտք ունի, չուտ է թափանցում իրերի երևոյթների էութեան մէջ, իսկ երբ մի անգամ հասկացաւ, խնդիրը պարզվեց նրա համար, այն ժամանակ նա վազում է դէպի գործ՝ զլխապատառ, բայց դարձեալ ծիծաղոտ, հանաքով, սրախօտութիւններով և վազում է դէպի մահ: Այսպէս է ֆրանսիացին:

Ա. Ահարոնեան

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՍԵ

«Times» լրագրի Պարիզի թղթակցի ասելով՝ «Iphigénie» նաւի վրա ծառայող ֆրանսիական օֆիցերները պատմում են, թէ Վիլհելմ կայսրը, մոնեթով այդ նաւը, որպէս թէ ասել է. «Ես շատ ուրախ եմ, որ գտնվում եմ ֆրանսիական նաւի վրա: Ֆրանսիական նաւաւորումը առաջինն է աշխարհի երեքին: Ես չեմ խօսում իմ նաւաւորումի մասին, եւ դեռ մանկական հասակումն է գտնվում: Ձեր բրէտանցիները դարձանալի նաւաւորներ են:

«Vot» ժամանակներում Վիլհելմայում շատ հետաքրքիր փորձ արին, այն է 1600 մետր բարձրութեան վրա գտնվող օդապարիկի սկսեցին առանց հետաքրքրելի խօսել երկրի հետ: Փորձը անցաւ շատ ավել:

«Daily Chronicle» լրագրի Հռոմի թղթակցից գրում է, որ այժմ Իտալիայում տեղի ունեցող սաստիկ շրջերի պատճառով, Պապը իրան չէ դրում, և այդ պատճառով ստիպված կը լինի թողնել իր Վատիկանի պարտէզները: Չը նայած այդ հանգամանքին՝ նա շարունակաւ ընդունել այցելողներին և գրել իր չրջաբերականը Ամերիկայի կաթողիկոսներին:

«Politische Correspondenz» լրագրին հաղորդում են Ալեքից, որ այդտեղից Բոսնիա ուղեւորվեց Սուլայի Իսամի պատիւի վրա, որը պատերազմում էր Նմլինում թիւրքերի դէմ: Իսամը ուղարկեց նրան Հնդկաստանի թիւրքերի մօտ, որպէս զի վերջիններս օգնութեան հասնեն Նմլինում:

նում բնակվող իրանց կրօնակիցներին, որոնք սովից մեռնում են հաղարներով: Կոթախտների դրութիւնը արդարև անտանելի է, բայց և այնպէս հիւսիսային մասերում բնակվող աղաքականութեան օգնութիւն հասցնելը, որտեղ կարելիք աւելի զգալի է, չափազանց դժուար է:

«Temps» լրագրին հետագրում են Կ. Պորսից, որ Բ. Կուռը պաշտօնապէս յայտնում է, որ թիւրք-սերբական սահմանների վրա տեղի ունեցած միջնադէպերին վերջ են տրված և որ մէկ կողմից կամ միւս կողմից տեղի չեն ունենայ հաղածանքներ: Երէկ Բ. Կուռը չրջաբերականներ ուղարկեց բոլոր պետութիւններին, որի մէջ ասված է, թէ նա իրան պատասխանատու չէ համարում այն դէպքում, երբ տեղի ունենան անկարգութիւններ՝ բոլորապէս, յուսական և սերբական բաղմունք խմբերի Մակեդոնիա և Եպիրոս անցնելու պատճառով:

«L'Echo» լրագրից հաղորդում են, որ չուտով տեղի կունենայ Բուլնի և Բիերնսոնի արձանների բացումը, որոնք կանգնեցած են ազգային նոր թատրոնի առաջ, բայց դեռ ծածկված են կտաւով: Խրիստիանայում սաստիկ վրդովված էին այն բանի դէմ, որ այն արկղները, որոնց մէջ դնուելված էին երկու ժառանգաւորները արձանները, և որոնք ձուլված էին Կերմանիայում, կրում էին հետեւալ մեծատառ մակագրութիւնը. «Խրիստիանայ» «Շվեդիա»: Երևում է, որ այն ձուլարանը, որտեղ պատրաստվել են այդ արձանները, տեղեկութիւն չունեն բոլորովին Նորվեգիայի գոյութեան մասին: Նորվեգիական լրագրիչները աւելի ևս դարձանալի են համարում այդ բանը, մանաւանդ այն պատճառով, որ դերձանական կայսրը տասնորոշ անգամն է, որ այցելում է Նորվեգիա: Շատ զարմանալի է, որ Կերմանիան շարունակում է նախել Նորվեգիայի վրա, իբր Եվրոպայի մի մասի վրա, մինչդեռ նրանց կապող միայն թաղաւորն է:

### ՄՇԱԿԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

22 յուլիսի

Կիեւ: 18 տարեկան գեղջկուհի Կորոջնեակովա, որ ծառայում էր աղախնու պաշտօնով, ձեռքերով խեղդեց իր տիրոջ երկու տղաներին, 4 և 7 տարեկան: Առաջինը խեղդված է յունիսի 28-ին, երկրորդը—յուլիսի 15-ին: Երեխաները խեղդված են ընած միջոցին: Առողջ երեխաների անպատեհ մահը տեղի տուեց հարց ու փորձի: Կորոջնեակովա խոստովանվեց և պատմեց բոլորը մանրամասնորէն: Կարծում են, որ նա ցնորված է: Երեխաներին նա սիրում էր:

ՊԱՐԻՑ: Լուրճ այսօր էլ մենիկ Բամբուլի:

ՎԻԵՆՆԱ: Խօսելով Հաադայի կոնֆէրէնցիայի վերջաբանութեան մասին, «Fremdenblatt» լրագրիչը նկատում է. «Վերջնական արձանագրութիւնը ստորագրված է բոլոր ներկայացուցիչներին կողմից: Այն պետութիւնների համար, որոնք ներկայացուցիչներ չեն ստորագրել դաշնագրութիւնը, ժամանակ է նշանակված մինչև դեկտեմբերի 8-ը: Այդպիսով, այն պետութիւնները, որոնց ստորագրութիւնը դեռ չը կան կարող չեն լինել նրանց: Չը ստորագրելը չէ կարելի երբեք համարել իրեն մերժում: Առաջիկայ կոնֆէրէնցիաները իրանց որոշումների համար յայտնի ժամանակամիջոցներ էին նշանակվում: Աստորո-Ունգարիայում ամբողջ գործը սկզբից արդէն ընդունվեց լուրջ կերպով, այդ պատճառով ամեն մի որոշում, որի վրա պէտք է լինի Աստորո-Ունգարիայի ստորագրութիւնը, ընկնում է ամենալուրջ կերպով: Պէտք է յուսալ, ասում է լրագրիչը,—որ մինչև 1900 թիւը՝ այն որոշումները, որոնք մշակվեցին, բաւական ստորագրութիւններ կունենան: Այդ կը լինի գեղեցիկ պարզ և ժողովուրդների համար, և ամենամեծ չնորհակալութիւն Խնքնակալին, որը նախաձեռնեց կոնֆէրէնցիան, և չնորհիւ այն բարձր յարգանքի, որը չրջապատել է նրան, հնարաւոր եղաւ նորութիւն մտցնել պատմութեան մէջ, այն է—խաղաղութեան կոնֆէրէնցիա կազմել, պատերազմը տեղի ունենալուց առաջ:

ՎԻԵՆՆԱ: Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ և յունական թագաժառանգ Նիկոլայ ժամանեցին այստեղ երկի երեկոյեան և մեկնեցին մի քանի օրով Դոմանդէն:

ՊԱՐԻՑ: Համալսարանի կարգապահական խորհուրդը որոշեց՝ արգելել Վոլտերեան լիցէի պրօֆեսոր Վէյլին դասախօսել 3 ամսով, և զրկել նրան նրա տարեկան ուսման երրորդ մասից այն բանի համար, որ նա իր աշակերտների հետ խօսել է Կրէյթուսի մասին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԻ: Պարիզի գինւորական գործա-



